



ՎԱՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ “ՕՐՀՈՒՄ” ԿԵՆՏՐՈՆ
VANADZOR PUBLIC ENVIRONMENTAL
INFORMATION “AARHUS” CENTER

№ Վ-003/2014

21 նոյեմբերի, 2014թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Նալբանդյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ հոդվածների, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ Վանաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն.

1. Լոռու մարզում շահագործվող ՀԷԿ-երի կողմից 2013 թվականի ընթացքում արտադրված էլեկտրաէներգիայի քանակը՝ ըստ ՀԷԿ-երի և ամիսների,
2. Լոռու մարզի ՀԷԿ-երին էլեկտրաէներգիայի դիմաց վճարման սակագները՝ ըստ ամիսների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի –րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30 օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Վերոհիշյալ տեղեկությունները կարող եք ուղարկել նաև էլեկտրոնային փոստով՝ info_vanadzor@aarhus.am հասցեով:

(Պատրաստ ենք վճարել մեզ տրամադրված տեղեկատվության պատճենահանման ծախսերը: Պատճենահանման հնարավոր ծախսերի համար խնդրում ենք նամակով մեզ տրամադրել նախարարության հաշվեհամարը և պատճենահանման ծախսաչափը՝ սկսած 11-րդ էջից):

Կանխավ շնորհակալություն:

Վանաձորի բնապահպանական
տեղեկատվության հասարակական
Օրհուս կենտրոնի համակարգող



Պերճ Բոջուկյան